ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

___ դեկտեմբերի 2011 թվականի №___Ա
քաղ.Երևան

«ՀԱՅՌՈՒՍԳԱԶԱՐԴ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՆԵՐԿՐՄԱՆ N0102 ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2002 թվականի ապրիլի 3-ի «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում էլեկտրական էներգիայի և բնական գազի ներկրման և արտահանման գործունեության լիցենզավորման ժամանակավոր կարգը հաստատելու մասին» N24 որոշումը և հաշվի առնելով «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական և «ԳԱԶՊՐՈՄ ԷՔՍՊՈՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների միջև 2008 թվականի սեպտեմբերի 12-ին կնքված բնական գազի մատակարարման N2102-08-22 պայմանագիրը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2002 թվականի դեկտեմբերի 24-ի «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերությանը բնական գազի ներկրման լիցենզիա տրամադրելու մասին» N95Ա որոշմամբ «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված N0102 լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգել մինչև 2015 թվականի հունվարի 1-ը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է 2012 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱՁԱՐՅԱՆ

ք.Երևան
___ դեկտեմբերի 2010թ.